ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Արթուր Համբարձումյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վաշինգտոն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 2024 թվականի մարտի 16-ից մինչև մարտի 24-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն «Պետական հատվածի պարտքի վիճակագրություն-ընդլայնված» թեմայով դասընթացին

5. **Քննարկված թեմաները.**

- Պետական ֆինանսների վիճակագրության և պետական հատվածի պարտքի վիճակագրության շրջանակները,
- Ինչն է համարվում պարտք և ինչպես է այն գնահատվում, Պարտքի տվյալների համախմբում (կոնսոլիդացիա),
- Ֆինանսական հաշվետվություններից պետական հատվածի պարտքի վիճակագրության տվյալների հավաքագրում, Պետական հատվածի պարտքի վիճակագրության խնդիրները,
- ֆինանսական վարձակալության և պետություն - մասնավոր գործընկերության հետ կապված պարտքը,
- Պետական հատվածի պարտքի վիճակագրության հավաքագրում, ներկայացում և տարածում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել 28 երկրների 29 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: ԱՄՀ-ի ներկայացուցիչների կողմից մասնակիցները բաժանվել են 3 խմբերի, որոնց առաջադրվել են պետական հատվածի պարտքի վիճակագրության և ներկայացված այլ թեմաների վերաբերյալ տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

Digitally signed by HAMBARDZUMYAN ARTUR 2803750090
Date: 2024.03.27 12:40:05 AMT

9. Ստորագրությունը, ամսաթիվը.